

նան ամբողջական եւ կատարեալ Դպրանոց մը շինելու համար» :

Կարգինալ Բորգեզիոյի հետ տեսակցութեան արդիւնքը նպաստաւոր եղած է : 1628, Փետր. 4ի Նիստին մէջ<sup>10</sup> կը յայտնէ Կարգինալ Ուրալդինօ, թէ Հայոց Դպրանոցի բացման համար կարելի պիտի ըլլայ Հիւրանոցի եկամուտէն 150 սկուզ ստանալ. 150 սկուզ ալ պիտի տրամադրէ Ս. Ժողովը այն գումարէն, որ Նախիջեանի Դպրոցին յատկացուած էր : Ասոր վրայ որոշուեցաւ որ նոր բացուելիք Դպրոցին մէջ այնքան աշակերտ միայն ընդունուի, որքան կարելի է հոգալ 300 սկուզով :

Այս որոշման վրայ էր Ս. Ժողովը երբ Հոռոմ հասաւ Հ. Յովհ. Թաղէոս Զուղայեցւոց խնդրագիրներով ծանրաբեռնուած : Զուղայեցիք կը փափաղէին Հոռոմ հայկական Դպրանոց մ'ունենալ, ուր կարենային մեծ թուով հայ աշակերտներ ղետեղուիլ : Անոնց խնդրագիրը չունիմ տրամադրութեանս տակ : Ս. Ժողովը իւր 1630, Յուլիս 23ին գումարած մասնաժողովի մէջ խորհրդածութեան կ'առնէ Հայոց առաջարկը եւ հետեւեալը կը սահմանէ<sup>11</sup>.

«Զուղայի հայ իշխաններու փափաղին, որով կը բաղձան Հոռոմ հայ մանկուոյն կրթութեան համար Դպրանոց մը բացուած տեսնել, Ժողովս կրնայ գոհացում տալ, եթէ անոնք

<sup>10</sup> Acta S. C., an. 1628—1629, vol. 6, p. 10, հմմտ. եւ p. 29.

<sup>11</sup> Acta S. C., an. 1630—1631, vol. 7, p. 101.